

Հարց

Ընկերության վերակազմակերպման գործարքը ենթակա՞ է, արդյոք, ավելացված արժեքի հարկով հարկման:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի՝ օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման գործարքները (միացում, միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում):

Հարց

ԱԱՀ վճարող կազմակերպությունը ոչ արտադրական նպատակով ձեռք բերված գույքի մասով մատակարարից ստացված հարկային հաշվում ԱԱՀ-ի գումարը կարո՞ղ է, արդյոք, հաշվանցել, եթե գույքը բարեգործական նպատակներով տրամադրվում է ոչ առևտրային կազմակերպությանը:

Պատասխան

ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը ոչ արտադրական (ոչ առևտրային) նպատակներով ձեռք բերված ապրանքները՝ այլ կազմակերպության անհատույց (մասնակի հատուցմամբ) հատկացման դեպքում կարող է հաշվանցել մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ պահպանելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ և 23-րդ հոդվածների պահանջները: Միաժամանակ, կազմակերպությունը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, կրի ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորություն:

Հարց

ԼՂՀ-ում գրանցված ԱԱՀ վճարող կազմակերպությունը բարեգործական ծրագրի շրջանակում ապրանքների մատակարարման գործարքի մասով ազատվո՞ւմ է, արդյոք, ԱԱՀ-ից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ ԼՂՀ-ում ԱԱՀ վճարողների կողմից մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ազատվում է ԱԱՀ-ից: Ընդ որում, ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև ԱԱՀ-ից ազատվող ապրանքների և ծառայությունների շրջանակները որոշում է ԼՂՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը:

Հարց

Շահութահարկով հարկման առումով գույքագրման ժամանակ բացահայտված հիմնական միջոցների ավելցուկը ներառվո՞ւմ է, արդյոք, համախառն եկամտի մեջ:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «իզ» կետի համաձայն՝ շահութահարկով հարկման առումով եկամուտների թվին են դասվում՝ գույքագրման (այդ թվում՝ ստուգման) ժամանակ բացահայտված հիմնական միջոցների, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և այլ գույքի ավելցուկը, իսկ հարկատուի կողմից տիրազուրկ գույքի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով (բացառությամբ՝ դատարանի որոշումների հիման վրա) իր իրավունքների ճանաչման դեպքում՝ տիրազուրկ գույքը: Գույքի ավելցուկը, տիրազուրկ գույքը գնահատվում է տվյալ հարկատուի մոտ առկա համանման արժեքով, իսկ այդ արժեքի բացակայության դեպքում՝ փորձաքննության եղանակով որոշված արժեքով, որը ձևավորում է այդ գույքի սկզբնական (ձեռքբերման) արժեքը և համախառն եկամտի մեջ ներառվում է ամբողջությամբ տվյալ (գույքի ավելցուկի դեպքում՝ ավելցուկի հայտնաբերման, իսկ տիրազուրկ գույքի դեպքում՝ իրավունքների ճանաչման) հաշվետու ժամանակաշրջանում:

Հարց

Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցի լուծարման դեպքում այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը ենթակա՞ է, արդյոք, նվազեցման համախառն եկամտից:

Պատասխան

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 12-րդ հոդվածի 1-ին մասի և Հաշվապահական հաշվառման ստանդարտ 16-ի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս լուծարվող հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ:

Հարց

2017թ. փետրվար ամսին գործադուրի ընդունած հրամանով հաշվարկվում են 2016թ. փարեկան արդյունքներով աշխատանքային պարտականությունները գերազանց կատարած աշխատողներին պարգևատրման գումարներ, որոնք վճարվում են աշխատողներին մարտ ամսին: Հարկվող եկամտի որոշման ժամանակ ի՞նչ մեթոդով պետք է առաջնորդվել և ո՞ր ամսվա հաշվարկում պետք է արտացոլվել առաջացած եկամտային հարկի պարտավորությունը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն, եթե ընթացիկ ամսում գործատուի կողմից ընդունված իրավական ակտով հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ժամանակահատվածներում աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության համար պարգևատրման գումարներ, ապա այդ գումարներից եկամտային հարկը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ընթացիկ ամսվա աշխատավարձի գումարը՝ միասնականացված կարգով, և արտացոլվում է այդ (ընթացիկ) ամսվա՝ տվյալ պարագայում փետրվար ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում: